

ՀԱՃՐՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ*

1920–1921 թուականները ճակատագրական կ'ըլլան Կիլիկիոյ Հայութեան համար: 1918 Հոկտեմբեր 30-ի Մուտրոսի համաձայնագրով, Թուրքիա կ'ընդունի իր պարտութիւնը: Ֆրանսական բանակները, որոնց շարքին «Հայկական Լէգէոն»-ի հայ կամաւորները, կը մտնեն Կիլիկիա: 1915-ին տարագրութեան ճամբան բռնած կիլիկեցիները, 1919-ին խանդավառութեամբ եւ մեծ յոյսերով կը վերադառնան իրենց բնօրրանները: Կիլիկիոյ գրաւումը Ֆրանսական բանակին կողմէ, Հայութեան մօտ ինքնավարութեան կը ներշնչէ վերարժարծելու Կիլիկիոյ ինքնավարութեան հարցը: Տակաւ յստակ կը դառնայ, որ Ֆրանսական իշխանութիւնները խանդավառ չէին ինքնավար Կիլիկիայի գաղափարին հետ, եւ անոնք բանակցութեան մէջ էին Թուրքիոյ նոր տէրերուն՝ Մուստաֆա Քէմալի գլխաւորած ազգայնական շարժումին հետ. 1921 Մարտ 9-ին կնքուած Ֆրանս-թրքական համաձայնագրով Կիլիկիան կը յանձնուի Թուրքիոյ:

1920-ին, քէմալական անկանոն ուժերը (չէթէներ), լուրջ սպառնալիք կը դառնան Հայկական բնակավայրերուն: Վտանգը դիմակայելու համար, զօր. Անդրանիկի հրամանատարութեան տակ Հայկական բոլոր կռուող ուժերու համախմբումով գինուորական կանոնաւոր կառոյցի մը ստեղծման գաղափարը կը մերժուի Ֆրանսական իշխանութեան կողմէ: Հայկական բնակավայրերէն իւրաքանչիւրը կը ստիպուի առանձինն կազմակերպել իր ինքնապաշտպանական կոիւր:

1920–1921 թթ. Կիլիկիոյ Հայկական ինքնապաշտպանական կռիւներուն շարքին իր ուրոյն տեղը ունի Հաճընի հերոսական ինքնապաշտպանութիւնը, որ կը յատկանշուի իր տեւողութեամբ, կազմակերպուածութեամբ եւ գինուորական հնարքներով:

Հաճընի ինքնապաշտպանութեան մասին արդէն գոյութիւն ունի յուշագրական, պատմագրական եւ գեղարուեստա-վաւերագրական պատկառելի գրականութիւն¹: Ստորեւ ներկայացուած փաստաթուղթը կու գայ կարեւոր ներդրում մը կատարելու այդ գրականութեան վրայ:

* Ներկայացվել է 17. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 08. II. 2022 թ.:

¹ Հայոց պատմութիւն, հ. IV, գիրք Ա, Երևան, 2010, էջ 227–229, Յ. Պօղոսեան. Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը եւ Շրջակայ Գողան-Դաղի Գիւղերը, Լօս Անճէլլես, Հաճընի Հայրենակցական Վերաշինաց Միութեան Կեդր. Վարչ., 1942, Ս. Թեքեան. Հաճընի Ութամսեայ դիցազնամարտը, Աթէնք, 1937, Ա. Թաթուլեան. Յուշեր Դիցազնական կեանքէ մը (1915–1920), Անթիլիաս, 1953, Ա. Ասպետ. Դրուաքներ Հաճնոյ Հերոսամարտէն եւ Հերոսին Ոգիսականը, Պէյրութ, 1961, Մ. Շիւրտմեան. Մոռցուած Դէպքեր եւ Դէմքեր Հաճնոյ 1920-ի Հերոսամարտին, Նիկոսիա, 1974, Ս. Վահագն. Հաճըն Սիրուն, Լոս Անճելես, 2017, Հ. Գրքաշարեան. Հաճըն, Եթէ Քեզ Մոռանանք ..., Երևան, 2014:

Պատմական իրականութիւնն է, որ 1920–1921 թթ. Կիլիկիոյ անցքերուն, ինքնապաշտպանական մարտերուն, յատկապէս Հաճընի ինքնապաշտպանական կռիւներուն կարեւոր մասնակցութիւն ունեցած է նաև ՍԴՀՀՀ կեանքի Կուսակցութիւնը: Փաստաթուղթն այն զեկուցագիր-նամակն է, որ 1920 Հոկտեմբեր 15-ին Հաճընի անկումէն ետք, պաշարման շղթան ճեղքող եւ մարտերով Ատանա հասնող մարտիկներու խումբին մաս կազմող ՍԴՀՀՀ Հաճընի վարչութեան անդամներ յղած են ՍԴՀՀՀ ԱՄՆ-ի Կեդրոնական Վարչութեան:

Խնդրոյ առարկայ նամակը պահպանուած է Հայաստանի Ազգային Արխիւի ֆ. 408, ց. 1, գ. 142, թ. 13 թղթապանակին մէջ, որ այլ անունով ծանօթ է որպէս Ներսէս Փիլիկեանի ֆոնտ: Ն. Փիլիկեան եղած է Սեբաստիոյ շրջանի Հնչակեան գործիչներէն, որ ԱՄՆ գաղթելէ ետք շարունակած է իր կուսակցական գործունէութիւնը: Ապա ներգաղթած է Խորհ. Հայաստան ու անոր անձնական արխիւը փոխանցուած Հայաստանի Ազգային Արխիւ: Այն կը պարփակէ անտիպ փաստաթուղթեր եւ հրապարակուած էջեր, որոնք կը վերաբերին Ն. Փիլիկեանի անձին, Սեբաստիոյ եւ ԱՄՆ-ի մէջ անոր ունեցած կուսակցական-հասարակական գործունէութեան: Հոն կան նաև փաստաթուղթեր, որոնք ուղղակիօրէն կապ չունին Ն. Փիլիկեանի անձին հետ եւ կը վերաբերին Հնչակեան Կուսակցութեան տարբեր շրջաններու գործունէութեան: Ակնարկուած նամակը կ'իյնայ այս բաժնին մէջ:

Ստորեւ տրուած փաստաթուղթը ցարդ գիտական շրջանառութեան մէջ դրուած չէ. այդ կը տպագրուի առաջին անգամ: Անոր մասին, մեր կողմէ գեկոյց ներկայացուած է 2020 Հոկտեմբեր 30–31-ին, «Կիլիկիան եւ Կիլիկահայութիւնը Հայոց Ցեղասպանութեան Տարիներին» նիւթով, «Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ» Հիմնադրամին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ համատեղ կազմակերպուած գիտաժողովին, Միժեռնակաբերդի թանգարան-յուշակոթողի սրահին մէջ:

ԵՂԻԱ ԺԵՐԵՃԵԱՆ

ՍԴՀՀՀ ՀԱՃԸՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ ՍԴՀՀՀ ԱՄՆ-Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ ՀԱՃԸՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԿՌԻՒՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

1920 Դեկտ. 10, Ատանա

Ամբողջ տասը ամիս արտաքին աշխարհէն զուրկ, անհամեմատ ուժերու դէմ մաքառող Հաճընը աւանդ, այսօր ոչ թէ իր յաղթանակը աւետել, հապա իր սրտակեղեք անկումն գուժել կու գայ իր ընկերներուն:

Ընկերներ, այսքան օրեր, կռիւր գոր մենք մղեցինք աննախընթաց էր: Թշնամին քանի մը անգամ, իրեն համար ձախող եւ կորստաբեր յարձակումներէ վերջ, ա՛լ յարձակումով յաջողութիւն ձեռք բերելէ յուսահատած, մեզ սովամահ կորսնցնելու ուղին բռնեց, որով շատ սեղմ ու ամուր շղթայի տակ մնացինք: Առաջին օրէն իսկ գիտէինք որ մեզի մահ պիտի վիճակ[ու]ի, գիտէինք որ երկար ատեն քաղաքը չի պիտի կրնայինք կշտաց-

ներ, բայց մեզ պաշարող թշնամիին կեղծ ու պատիր խոստումները անգոսնեցինք մենք ու ֆրանս. եւ հայկական եռագոյնին տակ մարտիրոսացումը նախընտրեցինք, քան թէ թշնամիին յանձնուիլ ու բաղդին ձեռքն խաղալիք դառնալը: Ձէնքի փարիլ ու պատուով իյնալ, այս եղաւ մեր նշանաբանը. ուստի անմիջապէս գտնուած ուժերը կազմակերպեցինք: Գաղթականութեան մէջ արիւնաքամ ժողովուրդ, բայց մօտիկ անցեալի մը շարեշար եղեռն[ն]երու կսկիծն ու վրէժովը բորբոքած, իր յոյսը դրաւ իր բազուկներուն վրայ: Ութը հարիւր կռուող երիտասարդներ ունէինք, որուն միայն երեք հարիւրը իր անձնական զէնքը ունէր: Կռուող զինուորներու 500ը Ս. Դ. Հնչ. ընկերներ էին, հարիւրը դաշնակցական եւ երկու հարիւրը Ձէգոք: Կռիւր մինչեւ վերջ մղուեցաւ կատարեալ համերաշխութեամբ, միաշունչ եւ միահոգի: Ինքնապաշտպանութեան քօմիթէ՝² անունով սպայակոյտ մ'ունէինք, որուն հրահանգներուն ենթակայ էին կռիւին թէ՛ հրամանատարները եւ թէ՛ վաշտապետները՝: Ութը հարիւր կռուող յառաջապահներէն զատ ունէինք չորս հարիւրէ բաղկացեալ պահեստի զինուորներ, պատանիներ, որոնց մէջ էին մեր Ս. Դ. Հ. Ուսանողական Միութեան հարիւր յիսուն անվահեր եւ սիրասուն ընկերները, որոնք ամբողջ կռիւ ընթացքին անձնուիրութեան մարմնացումն եղան ու հիացում առնեցին ամենուն: Մեր կիներն ալ իրենց բաժինը չի զլացան, անոնք հարիւր [եւ] հազարէ աւելի տոպրակներ պատրաստեցին, որոնք հարկ եղած տեղը փոխադրելով աւագէ շարժական խրամներ կանգնելու գործը կիներունն էր: «Իմ եւ քու» յի խնդիր չիկար մեր մէջ. ինչ որ ունէինք առաջին օրէն ինքնապաշտպանութեան քօմիթէյի տրամադրութեան տակ դրուեցաւ եւ ունեցածնիս հասարակաց եղաւ ու ամենայն յաջողութեամբ կռիւը շարունակեցինք մինչեւ Նոյ. 15⁴: Պաշարնիս հազիւ վեց ամիս բաւեց. ամենուս ունեցածը մէկէն սպառեցաւ հետեւաբար անօթութեան երեսէն մեր քաշած տա-

² Ինքնապաշտպանութեան քօմիթէ. «Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն Խորհուրդ», կազմուած 11 անդամներէ. նախագահ՝ Պետրոս եպս. Սարաճեան (Հաճընի առաջնորդ, ապագային Կիլիկիան Աթոռի կաթողիկոս), ատենապետ՝ Միհրան Գալեան (Կիլիկիոյ շրջանի ազգային ազատագրական շարժման երախտաւորներէն, նահատակուած Հաճընի ինքնապաշտպանութեան), փոխ-ատենապետ՝ Սարգիս Զէպէճեան (ընդհանուր հրամանատար):

³ Վաշտապետներ. Հաճընի պաշտպանական գիծը կը բաժնուի 4 ճակատներու, որոնք կը ղեկավարուին վաշտապետերով: Ա. վաշտ, Կէլիկի ճակատ, վաշտապետ Կարապետ Օղուլուքեան (նահատակութենէն ետք՝ Զանիէլ Զաւուչ). Բ. վաշտ, Մանիսխանէէն – Ս. Սարգիս եկեղեցի, վաշտապետ Մեսրոպ Շխրտըմեան (միաժամանակ Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն Խորհուրդի անդամ). Գ. վաշտ, հարաւային ճակատ, վաշտապետ Մկրտիչ Մանասէեան. Դ. վաշտ, արեւմտեան ճակատ, վաշտապետ՝ Վահան Ալթունեան (նահատակուած). նաեւ ձիաւոր շրջուն վաշտ, վաշտապետ՝ Պետրոս Թերզեան:

⁴ Կռիւը շարունակեցինք մինչեւ Նոյ. 15. Հաճընի անկման թուականը Հոկտեմբեր 15-ն է, երբ թշնամի ուժերը կը յաջողին ճեղքել պաշտպանական գիծը, կը մտնեն Հաճըն եւ կը սկսին բնակչութեան վայրագ կոտորածին ու քաղաքի հրկիզման: Նամակին մէջ կրկնակի յիշատակուած Նոյեմբեր 15-ն, հաւանաբար, նկատի ունի Հաճընի գրաւումէն ետք շարունակուող մասնակի, անձնապաշտպանական կռիւները:

ռապանքներն ալ աննկարագրելի էին: Թշնամիին հարուածը անարգեցինք, բայց բնութեան հարուածը մեզ փճացուց. եօթերորդ ամսուան արդէն մենք էշու կաշի, կատու, շուն եւ մուկ ամէն ինչ կերանք լմնցուցինք. Թունաւոր խոտեր ուտող ու մեռնողներ ալ եղան. աւանդ, որ վայրի բոյսերն ալ արածելու ազատութիւն չէինք վայելեր: Հարկաւ այս անհամեմատ անձկութեանց մէջ ալ ամէն ըստէի դուրսէն մեզի օգնութեան հասնելու յոյս ունէինք. շատեր իրենց աչքերը անյուսուցեան մէջ փակեցին, այրող շանթեր ուղղելով երկինք ...: Պատերազմի սկզբին միայն մէկ անգամ Ֆրանս. սաւառնակ մը այցելեց մեզի⁵ ու մէկ սնտուկ փամփուշտ ձգեց. ուրախացանք այդ աւետարներ աղաւնին տեսնելով. մեկնեցաւ ու ալ երկինք չի դարձաւ: Պատերազմի առաջին օրերուն Բուժլու⁶ գիւղի մեր Թօմարգացի եւ Բուժլուցի հայ եղբայրները անմիաս ազատեցինք հարիւրաւոր չէթէ-ներու ձեռքէն, միայն մեր կողմէն չորս ցոհ տալով: Հայաբնակ տեղերէ զուր տեղ օգնութիւն կ'ըսպասէինք: Շարի⁷ մէջ ունէինք եօթնասուն կռուող քաջեր, Ս. Դ. Հնչ. ընկերներ, որոնք մեր պաշարուած օրն իսկ հարիւրաւոր թուրք հորդաներէ յարձակում կրեցին ու չորս ամիս հերոսաբար դիմագրաւելէ վերջ փամփուշտներն կը սպառուի, որոնցմէ քառասուն ընկերներ, հետերնին աղջիկ մըն ալ խառնուած պաշարման գիծը կը ճեղքեն ու ողջամբ կը հասնին Հաճըն: Այդ ընկերները մինչեւ վերջին վարկեանին մեզի հետ կողք կողքի կուեցան, իրենցմէ հիմա միայն տասնըվեցը ողջ մնացած է: Շար մնացողները Թշնամոյն ձեռքը անցան:

Բուժլուէն վերջ փոքրիկ արշաւախումբով մը Քըրթէտը⁸ գրաւեցինք, ուրկէ 300 որբեր անմիաս բերինք քաղաքը: Որբանոցի Ամերիկեան պաշտօնեաները մեզի հետ գալ չ'ուզեցին, չէթէներու մէջ մնացին անոնք:

Երկու ամսուան պաշարուած էինք, երբ Զէյթունէն երկու բանբեր քաջեր եկան, չի կրցան Զէյթուն վերադառնալ. մին արիաբար կուի մէջ ինկաւ. միւսը հիմա հոս ողջ է: Զէյթունցիներէն ուրիշ կերպ տեղեկութիւն

⁵ Ֆրանս. սաւառնակ մը այցելեց մեզի. Հաճընի ինքնապաշտպանութեան միջոցին, երկու անգամ Ֆրանսական զինուորական օդանաւ կը յայտնուի երկինքին վրայ: Ա. անգամ Մարտ 16-ին, որ նամակներու ծրար մը կը ձգէ Հաճընի հիւսիս-արեւելեան ծայրամասը: Նամակներէն կը պարզուի, որ Սիսի մօտ կը կատարուի կամաւորահաւաք եւ կամաւորներու մեծ խումբ մը պատրաստ է Հաճըն օգնութեան գալու: Բ. անգամ Մարտ 28-ին, որ Ս. Սարգիսի «օղակայանին» վրայ պտոյտ կատարելէ եւ սնտուկ մը ռուսական փամփուշտ նետելէ ետք կը հեռանայ:

⁶ Բուժլու. Հաճընի գիւղերէն, դէպի հիւսիս ոտքով 4 ժամ հեռաւորութեան վրայ: 1915-ին ունեցած է շուրջ 600 հայ բնակչութիւն, որոնք երկու հանգրուանով տարագրուած են Տէր Զօր: Զինադադարէն ետք 100 ռուժլուցիներ վերադարձած են իրենց ծննդավայրը: 1915-ի եւ 1920-ի ջարդերէն փրկուած են ընդամենը 34 ռուժլուցիներ:

⁷ Շար. Հաճընի գիւղերէն, դէպի հարաւ-արեւելք ոտքով 9 ժամ հեռաւորութեան վրայ: 1915-ին ունեցած է շուրջ 2000 (350 տուն) հայ բնակչութիւն, որոնք տարագրուած են Տէր Զօր, Մէսքէնէ եւ Ռազգա: Ասոնց 85-90 տոկոսը զոհուած է: Զինադադարէն ետք 150 շարցիներ վերադարձած են ծննդավայր: 1920-ին Շար եւս կը պաշարուի եւ չորս ամիս ինքնապաշտպանուելէ ետք, Յաւլիս 3-ին կ'իյնայ: Պաշարուածներէն 85 հոգի կը կտրէ օղակը, որոնցմէ 35-ը կռիւով կը հասնին Հաճըն ու կը միանայ պաշտպանութեան:

⁸ Քըրտէթ. Տես ծանօթագրութիւն թիւ 9:

չունինք: Այսպէս մենք դուրս ուրիշ տեղացիներէ տեղեկութիւն չունէինք. միայն մեզ պաշարող թշնամին, որուն խրամները մեր խրամներուն շատ մօտիկ էին, «հաճինցինէր, պարապ տեղ մի աշխատիք, Ձեզմէ դուրս ուրիշ հայութիւն չի մնաց, ֆրանսական դրօշակը վար առէք, զէնքերնիդ յանձնեցէք ու Ձեզի հետ համբուրուինք» կը պոռար:

Պաշարման եօթերորդ ամսուն էր, երբ անօթութիւնը մեզ ստիպեց ու յարձակեցանք Չաթախի⁹ արեւմտեան կողմէ՝ Չէօչպէկի¹⁰ վրայ, Տօնուզ սէքին, ուր փշրեցինք թշնամի մեծ ուժը. գրաւեցինք 400 ռումբ, մէկ թնդանօթ¹¹, մէկ մեթրայօզ¹², երկու օթօմօթիկ¹³, հարիւր հրացան եւ հարիւր հազար փամփուշտ: Թշնամին հարիւրաւոր սպանեալ թողուց: Արդէն մեր մէջ ունէինք զէնք նորոգողներ, պօմպա շինողներ. թշնամին չի պայթող ռումբերը մեզի նախնական նիւթեր կը մատակարարէին, վառօդ ալ կը շինէինք, շաքարով եւ փօթասով կը լեցունէինք գերմանական փամփուշտները. քափսիւլի տեղ լուցկի կը լեցնէինք. աղին ալ ճարը գտանք. բայց հացի պակասը բանով մը չի կրցանք լրացնել ...: Տեղակալ ընկեր Չալեան¹⁴ եւ հրամանատար Ս. Ճէպէճեան¹⁵ ինքնապաշտպանութեան քօմիթէին հետ հա-

⁹ Չաթախ. Հաճընի արեւմտեան կողմէն անցնող գետ, որ միանալով արեւելեան կողմէն անցնող Գրրտէտ գետին կը կազմէ Սիհուն գետը (550 քմ.):

¹⁰ Չէօչպէկ. Հաճընի մօտակայ այգին, որ նշանաւոր էր իր պտուղի առատ ծառերով:

¹¹ Թնդանօթը կը տեղադրուի Հաճընի բլուրներէն մէկուն վրայ եւ այդ ռումբերով կը ռմբակոծուին թրքական զինքերը:

¹² Մեթրայօզ. գնդացի:

¹³ Օթօմ[ա]թիկ. Հրազէն, որ կը լիցքաւորուի ինքնագործ՝ շնորհիւ կրակոցի ընթացքին հաւաքուած վառօդային գազերով:

¹⁴ Չալեան Կարապետ. ծն. Հաճըն, ? – նահատակուած Հաճըն, 1920: Միջնակարգ ուսումը կը ստանայ Կ. Պոլսոյ Կեդրոնականին մէջ. 1893-ին կը ձեռքաւորուի որպէս յեղափոխական (յատկանշական է, որ ան կը ձեռքաւորուի 1896-ի Ձէյթունի ապստամբութեան կազմակերպիչ Աղասին եւ Պանք Օթթոմանի գրաւման կազմակերպիչ Բաբէն Սիւնին հետ): Ազատ արձակուելէն ետք կը մեկնի Պարսկաստան եւ կը հետեւի իրաւաբանութեան: Զինադադարէն ետք կը հաստատուի Ատանա եւ հին յեղափոխական Կարապետ Կէօքտէլէեանի հետ կը հաստատուի իրաւաբանական գրասենեակ. կը շարունակէ ունենալ կուսակցական գործունէութիւն: Հաճընի ինքնապաշտպանութեան նախօրեակին հաճընցիներու փափաքով եւ ճիգերով կը նշանակուի Հաճնոյ քաղաքապետի տեղակալ (քաղաքապետի պաշտօնը թափուր էր): Յատկանշուած է որպէս շրջահայեաց եւ իրատես գործիչ:

¹⁵ Ճէպէճեան Սարգիս (Ճէպէճի). ծն. Կեսարիա, 1879 – նահատակուած Հաճըն, 1920. զինուորական գործիչ, հնչակեան: Կեսարիոյ մէջ եղած է յանդուգն երիտասարդ մը: Ա. Աշխահամարտին կը զօրակոչուի թրքական բանակ. Երզնկայի ճակատին վրայ փախուստ կու տայ, կը միանայ Սեբաստացի Մուրատի, Սեպուհի խումբերուն եւ ապա զօր. Անդրանիկի Հայաստանի Երկրապահ Զօրամասին. կը մասնակցի Էրզրումի եւ Սարիղամիշի պաշտպանութեան կռիւներուն: Զօր. Անդրանիկի Առանձին Հարուածող Զօրագունդին մէջ կը նշանակուի ձիաւոր գունդի հրամանատար ու կ'ընկերանայ անոր Պարսկաստան եւ Զանգեզուր ռազմական երթին: Զինադադարէն ետք կը մեկնի Կիլիկիայ ուր կը նշանակուի Հաճընի ինքնապաշտպանութեան ընդհանուր հրամանատար. կը վիրաւորուի եւ անկողնային վիճակով կը շարունակէ այդ պարտականութիւնը: Հաճընի անկումէն ետք թշնամին

մախորհուրդ միշտ ալ միջոցներ փնտռեցինք, մեր առողջութիւնը արտաքին աշխարհին իմացնելով, անոնցմէ անմիջական օգնութիւն հայցելու: Երբ տեսանք որ «Երկինք եւ երկիր մեզ մոռցած են» դարձեալ մենք միշտ սուրհանդակ զրկելու ձեռնարկներ ըրինք եւ պէտք է ըսել որ այդ արկածալից պարտականութիւնը կատարողները մեր ընկերներն եղան:

Մեր առաջին սուրհանդակներն էին, Ապրիլ 10-ին, ընկեր Խաչատուր Գալայճեան եւ պ. Կարապետ Թուրսարգիսեան, որոնք դժբախտաբար Հաճընէն տաս ժամ հեռու, Թափանի լեռները, թշնամի ուժերու հետ կռիւ բռնուելով նահատակուեցան:

Մայիս 25-ին Սիսէն ընկեր Արմաղանեանի¹⁶ կողմէ զրկուած էր ընկեր Ասատուր Սաչեան¹⁷, որը օրինակելի քաջութեամբ մը միամիտակը Հաճըն հասաւ ու դարձեալ մեր լուրը տարաւ Սիս, որ այդ ժամանակին պարպուէր ու Ատանա փոխադրուէր էր. Սաչեան ողջ առողջ Ատանա կը հասնի, ուր կամաւորական շարժում մը առաջ կու գայ, բայց ...:

Երրորդ սուրհանդակ զրկեցինք Յուլիս ամսուն երեք հոգի. ընկերներ Սարգիս Թափանեան, Շարցի Կարապետ եւ Աւետիս Գըրպըրգեաններ, որոնք Սիսի լեռները թուրք չէթէներով կը պաշարուին ու մինչեւ վերջին փամփուշտին կը կռուին, յիսնապետ մը եւ հինգ զինուոր կը սպաննեն, ութը զինուոր ալ կը վիրաւորեն. յետոյ վերջին փամփուշտովին ալ իրենք զիրենքնին կը սպաննեն: (Այս մանրամասնութիւնները մեր ձեռք գերի ինկած թուրքերէ քաղած ենք):

Չորրորդ սուրհանդակ զրկուեցաւ Օգոստ. 20-ին, ընկերներ Միհրան Թաքէսեան եւ Սիսեցի Աբգար. ասոնք ողջամբ Ատանա կը հասնին եւ հիմա հոս կը գտնուին:

կը կտրէ անոր գլուխը եւ կը ցուցադրէ ծննդավայրին՝ Կեսարիոյ փողոցներուն մէջ:

¹⁶ Արմաղանեան Սարգիս (Մըռըզ). ծն. Սեբաստիոյ Իսանլու գիւղը, 1890 - սպանուած Մարտէյլ, 1946. ազատագրական պայքարի գործիչ, Ֆետայի, հնչակեան: Ազգային ազատագրական շարժման կը միանայ Սեբաստիոյ մէջ. փախստական կը մեկնի Չեռնոգորիա եւ կը միանայ փարթիզական շարժումներուն: 1912-ի թուրք-պուլկարական պատերազմին մաս կը կազմէ պուլկար բանակին մէջ գործող Անդրանիկի գլխաւորած կամաւորական ջոկատին, յիսնապետի աստիճանով: Կը պարգեւատրուի զինուորական շքանշանով: 1915-ին կը մեկնի կովկասեան ռազմաճակատ եւ կը նշանակուի հայկական կամաւորական 6-րդ գունդի բ. հարիւրակի հարիւրապետ: 1917-ին, Երզնկայի ճակատին վրայ, իր խումբով կը մարտնչի թրքական ներխուժման դէմ: 1918-ին կը միանայ զօր. Անդրանիկի Հայաստանի Երկրապահ Զօրամասին: Զինադադարէն ետք կը մեկնի Կիլիկիա: Իր գլխաւորութեամբ կը կազմուի Հաճընին օգնութեան մեկնող կամաւորական խումբ: Յրանսական իշխանութիւնները դէմ կ'ըլլան այս նախաձեռնութեան եւ արշաւախումբը կը ցրուեն. կը ձերբակալեն Ս. Արմաղանեանը եւ կ'արտաքսեն Կիլիկիայէն: Կը մեկնի Յունաստան, ապա Սերպիա եւ վերջնականապէս կը հաստատուի Ֆրանսա՝ Մարսէյլ:

¹⁷ Սաչեան Ասատուր (Հերոս). ծն. Հաճըն, 1888 — մահ. Պէյրութ, 1968. Արհեստով հովիւ, ապա փռապան, հնչակեան: Կիլիկիոյ Հայաթափումէն ետք, Լիբանանի մէջ շարունակած իր կուսակցական գործունէութիւնը:

Հինգերորդ սուրհանդակ ղրկուեցան Սեպտ. ամսուն, ընկերներ Միսաք Կէօզիւքիւհիքեան, Գրիգոր Սաչեան եւ Յարութիւն Ղըրըմեան. ասոնք եւս հիմա հոս ողջ են: Իւրաքանչիւր ողջ հասնող ընկերներ թէ՛ ֆրանս. Կառավարութեան եւ թէ՛ մեր Ազգին¹⁸ կը պարգեն Հաճնոյ անմիջական օգնութեան կարօտ լինելը: Թախանձագին օգնութիւն կը խնդեն ...:

Այս, անօթութիւնը մեր տունը կործանեց: Տասը հազարի մօտ բնակիչներէ մինչեւ Նոյ. 15 միայն 200 մեռեալ ունէինք, որին մեծ մասը անօթութեան զոհ: Ողջ մնացողներս ալ անկարող շարժելու. նօթի եւ անսուաղ. կիսամեռ դիակներ:

Նահատակ իյնողներու անմահ յիշատակը, արդարեւ անմոռաց է, եւ անոնց վրէժը յաւիտեան պիտի անշէջ մնայ մեր սրտերուն մէջ: Ինչպէս չի յիշել անոնք, որոնք սարսափ ազդեցին վատ թշնամոյն:

1. Ընկեր Հաճի Պապուկեան (մսագործ), վաշտապետ, իր 25 հոգինոց խումբով, կռիւին ամենակատաղի ճակատը պաշտպանեց, ինկաւ բայց անմահացաւ:

2. Ընկեր Կարապետ Մեխարեան¹⁹, յիսնապետ, իր 25 հոգինոց խումբով սարսափեցուց թշնամին, երեք անգամ վիրաւորուելէ վերջ ինկաւ:

3. Ընկեր Դանիէլ Սըվդընեան, յիսնապետ, իր 25 հոգինոց խումբով զէն ի ձեռին քաջաբար ինկաւ:

4. Ընկեր Վահան Ալթունեան, Դ. վաշտապետ, տիպար քաջութիւն ցոյց տուաւ:

5. Ընկեր Ծէհէննէմ²⁰, կեսարացի, Բ. վաշտի փոխ վաշտապետ, նշանաւոր հանդիսացաւ իր անվախ յանդգնութեամբ:

6. Ընկեր Արթին Չաուշ, զէյթունցի, Ա. վաշտապետ, իր աննման քաջութեամբ հիացում առթեց:

7. Ընկեր Արշակ²¹, կամաւոր, Կէլիկի Ա. վաշտի վաշտապետ. նոյնքան արիասիրտ եւ նոյնքան անվահեր:

¹⁸ Ազգին. Ատանայի Ազգային Խորհուրդը, որուն ատենապետն էր Պօղոս Նուպար փաշայի գլխաւորած Փարիզի Հայ Ազգային Պատուրակութեան կողմէ Կիլիկիոյ շրջանի լիազօր-գործիչ նշանակուած Միհրան Տամատեան:

¹⁹ Փաստաթուղթին մէջ նշուած բազմաթիւ անուններէն, մենք հնարաւորութիւն ունեցանք հանդիպելու Կ. Մեխարեանի, Վ. Ալթունեանի եւ Գ. Ածիլածեանի շարաւիղներուն հետ, անոնց կենսագրութեան մասին տուեալներ ունենալու համար: Չորրորդ սերունդը ոչինչով կրցաւ օգտակար ըլլալ:

²⁰ Ծէհէննէմ (թրք. դժոխք). Արդէնպապ Քէչիշեան (Ղարաճէհէննէմ – թրք. Սեւ դժոխք). ծն. Բումտիկին, ? – նահատակուած Հաճըն, 1920. Յետայի, հնչակեան: Ազատագրական շարժման կը միանայ 1890-ականներու սկիզբը, մաս կազմելով ծննդավայրին մէջ Ժիրայրի կողմէ կազմուած ֆետայական խումբին: Ա. Աշխարհամարտին կը բանտարկուի եւ զինադադարէն ետք ազատ կ'արձակուի: Կը հաստատուի Ատանա: Հաճնոյ ինքնապաշտպանութեան կը բերէ իր հին ֆետայի փորձառութիւնը:

²¹ Ընկեր Արշակ. Արշակ Սահակեան, ծն. Վան ? – նահատակուած Հաճըն, 1920: Կովկասեան ռազմաճակատին վրայ կռուած զօր. Անդրանիկի զօրամասերուն մէջ: Հնչակեան կամաւորներու 20 հոգինոց խումբով, Ատանայէն կը մեկնի Հաճըն. կը նշանակուի Կիլիկիա թաղամասին վաշտապետ:

Ինկան, կռւի մէջ ինկան անոնց ամէնքն ալ, վրէժ գոռալով: Ինչպէս մոռնալ նահատակներու մէջ հովիւներ Աբրահամ Թօսունեան, պարոն Սոֆեան եւ Գրիգոր Զարայրեան Հաճնոյ դիւցազունք փառքի սիրուելու արժանի են ասոնք: Ընկերներ նոյնպէս Վարդան Խարբուլթեան, Եփրեմ Քէրտմէնեան, Անանիա Էֆղանեան, Արսէն Ածիլածեան, յիսնապետներ: Բոլորն ալ կռւի մէջ առիւծներ էին, իսկ կատարումի մէջ փիւնիկներ եղան, որոնց վրէժը կը բորբոքի մեր սրտերուն մէջ:

Նոյ. 12-ը չարաշուք թուական մը պէտք է սեւագծուի մեր հայ տարեգրութեան մէջ: Անմահն Ժիրայր²² եւ առիւծասիրտ Մուրատի²³ սիրեցեալ հայ-րենիքի զարհուրելի օրն էր այդ օրը: Վամբիր թշնամին, հազարաւոր հորդաներով հորս կողմէն յարձակեցաւ մեր վրայ. անասան էր մեր հաւատքը եւ աննկուն մեր քաջերու կորովը: Չորս կողմէն թուրքը մեզ շրջապատեց: Թշնամին 155-նոց երկու եւ 105-նոց երեք թնդանօթներով երեք օր, երեք գիշեր անընդհատ ուռմը տեղաց մեր գլխուն: Առաջին օրն իսկ Մայր Եկեղեցւոյ բերդը քանդուեցաւ. երկրորդ օրը արդէն քար քարի վրայ մնացած էր. սակայն մեր կորիւնները տակաւին կը յամառէին տեղի տալ: Երրորդ օրը, աւանդ, ա՛լ թուցան մեր կարչնեղ բազուկները. անօթի, անզօր թեւեր մեր կամքին դէմ ընդվզեցան. ա՛լ ձեռքեր չեն ուզեր շարժիլ: Քովդ, միտքիդ, հոնդացող վիրաւորներ «ընկերներ, փրկարար գնդակ մը մեր կուշտին, ազատարար սուր մը մխեցէ՛ք մեր կողին, որպէսզի թշնամւոյն ձեռք չի մնանք» կը պոռչտան: Աղջիկներ ու հարսներ արիւն կը փսխեն. «Թոյն առէ՛ք, թոյն, կը խրախուսեն գիրար. թո՛ղ հայու պատիւը, հայ արիւնով թրծուած հողերու մէջ թաղուի ...»: Ալ մի՛ նայիր, շուրջդ թափթփած սիրելիներուն: Կուռղ մարտիկներ օրհասական վարկեանի մէջ՝ վերջին յարձակում մըն ալ կը փորձեն, թշնամին աջ թեւին վրայ: Թշնամին աջ ու ձախ ապառաժներու ետին մտած դժոխային

²² Ժիրայր. Մարտիրոս Պոյաճեան. ծն. Հաճըն, 1856 – կախաղան հանուած Եղգատ, 1894: Հայ ազգային ազատագրական շարժման առաջին նուիրեալներէն, ուսուցիչ, ֆետայի, հնչակեան: Ազատագրական շարժման քարոզչութեան եւ կազմակերպչական աշխատանքներուն կը նուիրուի 1876-էն. կը կազմէ ֆետայական խումբեր: Առաւելաբար կը գործէ Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ շրջաններուն մէջ: Իր շունչին տակ կը դաստիարակուի հայրենասէր եւ մարտունակ սերունդ մը: Ժողովուրդը անոր կը վերագրէ առասպելական կարողութիւններ:

²³ Մուրատ. Համբարձում Պոյաճեան. ծն. Հաճըն, 1860 – կախաղան հանուած Կեսարիա, 1915: Յեղափոխական, ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, հնչակեան: Ժիրայրի կրտսեր եղբայրը: 1885-ին, մինչ ան կ'ուսանէր Կ. Պոլսոյ բժշկական համալսարանը, կը կազմէ Հայոց Յեղափոխական Ընկերութիւնը: 1890-ին կը գլխաւորէ Գում Գաբուի ժողովրդային ցոյցը. փախստական կը մեկնի Ժնեւ ապա Աթէնք: 1894-ին կը գլխաւորէ Սասնոյ ապստամբութիւնը: Կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Ափրիկեան Թշիփոյի (Լիպիա), Յիզան բերդարգելարանը: 1906-ին առասպելական փախուստով մը կը հասնի Փարիզ ու կը միանայ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան: 1907-ին կոչով մը կը դիմէ հայ կուսակցութիւններուն, միասնական գործունէութեան ծրագիր մը մշակելու համար: Օսմ. Սահմանադրութենէն ետք կը վերադառնայ Կ. Պոլիս. կ'ընտրուի օսմ. խորհրդարանի պատգամաւոր (մինչեւ 1912) եւ ազգային երեսփոխանական ժողովի անդամ: 1914-ին կը մասնակցի Հայաբնակ Նահանգներու Բարեկարգման Ծրագրի մշակման եւ անոր շուրջ ծաւալած դիւանագիտական յարաբերութիւններուն:

կրակ կը տեղացնէ մեր վրայ: Գիշերը վրայ կը հասնի ու մութին մէջ կը կորսուինք: Հետեւեալ օրն ալ եւ միշտ պարբերական կռիւներ մղելով. Սիսէն, Թումլու Գալէ եւ վերջապէս Ճիհան կը հասնինք, միմիայն չորս հարիւր հոգի ...: Ահա այս է վերապրող Հաճընը: Ճիհան հասնողներէն 150ը հնչ. ընկերներ են, որոնց 40ը Չորք-Մարգուան ղրկուեցաւ, Ճիհանի ֆրանս. ուժերու կողմէն. հարիւր տասն հասանք Ատանա: Ատանայի մասնաճիւղը բարոյական աջակցութիւն չի խնայեց մեզի. փչրուած Հաճընի մասնաճիւղը վերականգմուեցաւ. եօթը հոգինոց վարչութիւն մը կազմեց, նորէն Սուրբ գործին փարած կը մնանք: Տնաքանդ հաճընցին, ներկայիս անտուն, անտէր, մերկ ու բոպիկ, կիսաքաղց ու թափառական կոչ կուղղէ Ձեզ, արտասահմանի եղբայրներ: Եթէ շուտով նիւթական օգնութիւն չի փութացնէք մեզի, դժուր եւս մնաք բարով. մեզմէ ալ յոյսերնիդ կտրեցէք ...: Ժիրայրի եւ Մուրատի հայ-ընեիքին տասը հազարի միակ նեցուկները չորս հարիւրը գէթ ապրեցուցէ՛ք: Մենք մեր կրցածը ըրինք. դուք ալ Ձեզի արժանի[ի]ն ըրէք:

Ընկերական բարեւաներով

Հաճնոյ Ս. Դ. Հնչ. Մասնաճիւղի Վարչութիւն

Յարութիւն Ատենադպիր Գ. Ածիլածեան Ռուբէն Ատենապետ Ս. Երկաթեան²⁴:

(կնիք)

²⁴ Ռուբէն Ս. Երկաթ (Տէմիրճեան): Կիլիկիոյ շրջանի ազգային, կուսակցական գործիչ: Մաս կը կազմէ Հաճնոյ Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն Խորհուրդին: Կիլիկիոյ հայաթափումէն ետք ազգային-կուսակցական գործունէութիւնը կը շարունակէ Լիբանանի մէջ, ուր եւ կը մահանայ: